

---

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1944-  
1964 ԹԹ.

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Ա. Ս.

1930-ական թվականները հայրենիք-սփյուռք հարաբերություններում դժվարին ժամանակներ էին: Խորհրդային Հայաստանի իշխանությունները, գաղափարաբանական և աշխարհաքաղաքական նպատակներով, սկզբում խիստ սահմանափակեցին, իսկ 1937 թ. հանրապետությունում Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեության կասեցումով, փաստորեն, իսպառ դադարեցրին հարաբերությունները Խորհրդային Միության սահմաններից դուրս բնակվող հայության հետ<sup>1</sup>:

Երկրորդ աշխարհամարտի ընթացքում աշխարհասփյուռ հայության ուշադրության կենտրոնում հայրենիքն էր, որ դարձյալ կանգնել էր վտանգի առաջ: Սփյուռքահայությունն իր հնարավորությունների սահմաններում աջակցում էր Խորհրդային Հայաստանին, իսկ վերջինս էլ այդ օգնությունից չէր հրաժարվում: Ուստի շուտով առաջ եկավ սփյուռքահայության հետ կապերը վերականգնելու հարցը: Թեև շեշտադրումը կատարվեց բացառապես մշակութային կապերի վրա, իրականում հետապնդվում էին նաև հստակ ընդգծված քաղաքական նպատակներ:

1944 թ. սեպտեմբերի 12-ին Խորհրդային Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոն քննարկեց սփյուռքահայության հետ մշակութային կապերի ամրապնդման խնդիրը: Կայացված որոշման մեջ ասվում էր. «Սովետական Միության նկատմամբ հետևողականորեն բարեկամական ուղեգիծ վարող արտասահմանյան հայկական առաջադիմական կազմակերպությունների հետ կապերի ընդլայնման հետ կապված համաձայնել Արտասահմանի հետ մշակութային կապերի համամիութենական ընկերություն (BOKC) վարչության նախագահ ընկ. Կեմենովի առաջարկությանը և նպատակահարմար համարել Արտասահմանի հետ մշակութային կապերի համամիութենական ընկերության Հայաստանի հարցերով լիազոր համակարգի վերակազմավորումը որպես «Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի հայկական ընկերություն» (ՄԿՀԸ/ԱՕԿԸ ` այսուհետ ` ՄԿՀԸ-ի<sup>2</sup>)»: ՄԿՀԸ նախագահ նշանակվեց Մ. Պետրոսյանը<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս ՄԼԵՊՈՅԱՆ Է., Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937 թթ., Ե., 1999, էջ 167-169:

<sup>2</sup> Պաշտոնական և գիտական գրականության մեջ օգտագործվում է այս կազմակերպության բուն անունը՝ ԱՕԿԸ-ի հայերեն տառադարձությունը՝ ԱՕԿՄ-ը: Մենք սույն հոդվածում կլիբառենք կազմակերպության հայերեն անվան հապավումը՝ ՄԿՀԸ:

<sup>3</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 709, ց. 9, գ. 165, թ. 1:

Հատուկ կազմակերպչական հանձնաժողովի կողմից շուտով կազմվեց ՄԿՀԸ կանոնադրությունը, հաստատվեց հաստիքացուցակը, իսկ հիմնադիր ժողովում (նոյեմբերի 20) ընտրվեց 9 անդամից բաղկացած ղեկավար վարչություն: Վերջինիս կազմում ընդգրկվեցին ճանաչված գիտնականներ և գործիչներ Վ. Համբարձումյանը (Հայկական ԽՍՀ ԳԱ նախագահ), Ա. Մելիք-Աղամյանը, Հ. Դանիելյանը, Ա. Շավարշյանը, Զ. Բաշինջադյանը և այլք<sup>4</sup>:

Ընկերությունն իր աշխատանքները սկսեց 1945 թ. հունվարից: Նրա հիմնական նպատակն արտասահմանի հայկական «առաջադիմական» ընկերությունների ու կազմակերպությունների հետ կայուն և տևական մշակութային կապի հաստատումն էր<sup>5</sup>: Քաղաքական առումով ՄԿՀԸ-ի գլխավոր նպատակն արտերկրում խորհրդային կարգերի քարոզչությունն էր<sup>6</sup>:

Միյուրոքի կազմակերպությունների նկատմամբ խորհրդային իշխանությունների վերաբերմունքը երբեք էլ միանշանակ չի եղել: Նրանք միշտ էլ արտերկրի հայկական կազմակերպությունները բաժանել են երկու խմբի՝ 1. առաջադիմական (կոմունիստներ, հնչակյաններ, ռամկավարներ), 2. ռեակցիոն կամ հետադիմական (դաշնակցականներ): Ըստ այդ բաժանման էլ հարաբերություններ են հաստատվել բացառապես առաջին խմբում ընդգրկվածների հետ<sup>7</sup>:

1945 թ. հունվարի 20-ին ՄԿՀԸ վարչությունը կոչով դիմեց արտասահմանի հայերին: Կոչում, որն ուղղված էր ընդհանուր առմամբ հայկական բոլոր գաղթօջախներին և մասնավորաբար տեղերի առաջադիմական կազմակերպություններին, հայրենակցական միություններին ու մամուլի օրգաններին, ասվում էր. «ԱՕԿՄ-ի նպատակն է հաստատել կայուն և տևական մշակութային կապ արտասահմանյան առաջադիմական ընկերությունների ու կազմակերպությունների հետ, այն կազմակերպությունների ու ընկերությունների, որոնք անկեղծորեն արտահայտում են իրենց բարեկամական զգացումները Սովետական Հայաստանի նկատմամբ: Մենք ապրում ենք հայ ազգային մշակույթի մեծ վերելքի ժամանակաշրջան: Մեր երկրում կան մշակութային բուռն զարգացման [բոլոր] պայմաններն ու հնարավորությունները: Մենք ձեզ հետ ունենք մշակութային մի ընդհանուր շահ և ձգտում, մեզ համար թանկ է մեր հնագույն մշակույթը, մեզ կապում է նրա էլ ավելի զարգացման ու հարստացման միահամուռ ցանկությունը<sup>8</sup>:

Ըստ վերոնշյալ կոչի՝ ընկերության հիմնական խնդիրներն էին.

<sup>4</sup> Նույն տեղում, թ. 2:

<sup>5</sup> Նույն տեղում, թ. 2-3:

<sup>6</sup> Տե՛ս Բաղայան Ա., Խորհրդային Հայաստան-սփյուռք կապերի պատմության փուլերը («Հայ գաղթականությունը և հայրենիք-սփյուռք կապերը 1918-1985 թթ.» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Ե., 2011, էջ 74):

<sup>7</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 6, թ. 1-6:

<sup>8</sup> Նույն տեղում, ֆ. 709, ց. 9, գ. 165, թ. 2-3:

1. Խորհրդային Հայաստանի բնակչությանն իրազեկել արտասահմանյան երկրների հայկական գաղթօջախների պատմությանը, կենցաղին, տնտեսական, գիտական ու մշակութային կյանքին,

2. արտասահմանյան երկրների ժողովուրդներին ներկայացնել Հայաստանի պատմությունը՝ փոխադարձ այցելությունների, ցուցահանդեսների, համերգային հյուրախաղերի, գրականության և մշակութային զանազան ծրագրերի միջոցով:

Գոչում գոհունակություն էր արտահայտվում այն հայրենանվեր գործերի համար, որ հայրենական պատերազմի դժվարին տարիներին՝ կատարում էր սփյուռքահայությունը՝ ամեն ինչ գոհաբերելով հայրենիքի պաշտպանությանն ու հաղթանակին<sup>9</sup>:

Գործունեության սկզբնական փուլում ՄԿՀԸ-ի ամենակարևոր խնդիրներից էին սփյուռքը լավագույնս հետազոտելն ու ճանաչելը: 1944 թ. դեկտեմբերի 8-ին ԽՍՀՄ արտգործժողկոմի՝ Վ. Մոլոտովին ուղղված գրության մեջ Հայկական ԽՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ս. Կարապետյանը գրում էր. «Հաշվի առնելով արտասահմանի հայերի աճող հետաքրքրությունը ԽՍՀՄ-ի և Խորհրդային Հայաստանի նկատմամբ, Հայկական ԽՍՀ կառավարությունը մոտակա ժամանակաշրջանի համար Հայաստանի ԱԳԺԿ-ի (արտգործժողկոմատ) առաջ խնդիր է դնում՝ ուսումնասիրել վերոթվարկված արտասահմանյան երկրներում հայերի դրությունը՝ պարզելու համար յուրաքանչյուր երկրում հայերի քանակը, նրանց քաղաքացիությունը, զբաղմունքի տեսակը, տվյալ պետության քաղաքացիների համեմատությամբ նրանց իրավական և ունեցվածքային կարգավիճակը, քաղաքական կուսակցությունները, խմբերն ու կազմակերպությունները և հայության վրա նրանց ազդեցությունը, հայերի մշակութային, կրթական և այլ կազմակերպությունների առկայությունը, պարբերական և հատկապես առաջադիմական հրատարակությունները, ինչպես նաև բացահայտել արտասահմանի հայերի հարազատական, գիտական, մշակութային և այլ կապերը Խորհրդային Հայաստանի հետ»:

Այդ հարցերի ուսումնասիրության համար Ս. Կարապետյանը խնդրում էր Սիրիայի, Լիբանանի, Իրանի, Թուրքիայի, Եգիպտոսի, Ֆրանսիայի, Բուլղարիայի և ԱՄՆ-ի ԽՍՀՄ դեսպանություններում, առաքելություններում և հյուպատոսություններում թույլատրել ունենալու ՀԽՍՀ ԱԳԺԿ մեկական պատասխանատու աշխատակից<sup>10</sup>:

Այս գրությունը ցույց է տալիս, որ ՀԽՍՀ իշխանությունները փորձում էին ամբողջությամբ ուսումնասիրել գաղթավայրերը՝ հիմնականը համարելով Սիրիայի,

<sup>9</sup> Նույն տեղում, թ. 3-5:

<sup>10</sup> Նույն տեղում, ֆ. 326, ց. 1, գ. 13, թ. 1-2:

Լիբանանի, Իրանի, Թուրքիայի, Եգիպտոսի, Ֆրանսիայի, Բուլղարիայի և ԱՄՆ-ի գաղթօջախները:

Ս. Կարապետյանը 1945 թ. սվեց հայկական գաղթօջախների ուսումնասիրության հրահանգը, ըստ որի, պետք է ճշգրտվեին՝ 1. առանձին գաղթօջախների ստեղծման պատմությունը, 2. հայության քանակը գաղթօջախներում, 3. տնտեսական վիճակը, 4. քաղաքական և իրավական կարգավիճակը<sup>11</sup>:

Այդ և հետագա տարիներին մանրամասն տեղեկանքներ պատրաստվեցին սփյուռքի գաղթօջախների, կազմակերպությունների, պարբերական մամուլի և այլնի վերաբերյալ<sup>12</sup>:

Սփյուռքում քարոզություն ծավալելու շահեկանությունից ելնելով՝ ընկերությունը մեծ տեղ էր հատկացնում սեփական պաշտոնաթերթ ստեղծելու գործին: Այդ հարցը ՀԿԿ կենտրոնական կոմիտեն քննարկել է 1945 թ. մայիսի 29-ի նիստում՝ որոշելով «հրատարակել ամենամյա գրական-գեղարվեստական նկարագրող ամսագիր՝ վեց մամուլ ծավալով, երկու հազար տպաքանակով»<sup>13</sup>: Ամսագիրը կոչվեց «Սովետական Հայաստան»: Սփյուռքում համապատասխան վստահություն ու համակրանք ձևավորելու նպատակով ամսագրի խմբագրական կազմում ընդգրկվեցին այնպիսի մեծանուն գործիչներ, ինչպիսիք էին Դ. Դեմիրճյանը, Վ. Համբարձումյանը, Վ. Վաղարշյանը, Ս. Սարյանը և այլք:

«Սովետական Հայաստանի» անդրանիկ համարը լույս տեսավ 1945 թ. հուլիսին և ուղարկվեց 17 գաղթօջախներ: Հիմնական հասցեատերերը սփյուռքահայ «առաջադիմական» կազմակերպություններն ու միություններն էին և լրատվամիջոցների խմբագրատները<sup>14</sup>: Ամսագրի էջերում մեծ տեղ էր հատկացվում քաղաքական խնդիրներին: Մասնավորապես, խմբագրության առջև խնդիր էր դրվել մանրամասնորեն լուսաբանել սփյուռքի «առաջադիմական» կազմակերպությունների գործունեությունը, ինչպես նաև ուժեղացնելով «պայքարը ամերիկա-անգլիական իմպերիալիզմի և նրանց դաշնակ վարձկանների դեմ»՝ «դառնալ սուր զենք արտասահմանի հայ աշխատավորության ձեռքում»<sup>15</sup>:

Ընկերության ձևավորման և համապատասխան գործառնություններ որդեգրելու գործընթացում հույժ կարևոր էր նրա բաժինների (մասնաձյուղեր) ստեղծումը: 1946 թ.

<sup>11</sup> Տե՛ս Բաղայան Ա., նշվ. աշխ., էջ 74:

<sup>12</sup> Օրինակ՝ Լիբանանի հայկական գաղթօջախի մասին (Ֆ. 326, գ. 1, գ. 89, թ. 29-31), Լիբանանի Խորհրդային Հայաստանի բարեկամների ընկերության մասին (Ֆ. 709, գ. 1, գ. 50, թ. 15-18), Լիբանանահայ մամուլի մասին (Ֆ. 326, գ. 1, գ. 173, թ. 8-9), ՀՅԴ ղեկավար գործիչների մասին (Ֆ. 709, գ. 1, գ. 41, թ. 18-22), ՀՅԴ գործունեության մասին (Ֆ. 709, գ. 1, գ. 87, թ. 5-12), ամերիկահայ մամուլի մասին (Ֆ. 326, գ. 1, գ. 156, թ. 1-4) տեղեկանքներ և այլն:

<sup>13</sup> ՀԱԱ, ֆ. 709, գ. 9, գ. 165, թ. 2:

<sup>14</sup> Նույն տեղում, թ. 16:

<sup>15</sup> Նույն տեղում, գ. 3, գ. 18, թ. 1-8:

վերջից ստեղծվեցին գրականության, լուսավորության, արվեստի, գիտությունների և առողջապահության մասնաճյուղեր, դրանցում ընդգրկվում էին մտավորականներ և հասարակական գործիչներ<sup>16</sup>:

Փոխադարձ ճանաչողության նպատակով ՄԿՀԸ-ն շեշտադրում կատարեց փոխայցելությունների կազմակերպման վրա: Դրա շնորհիվ 1950-ական թթ. կեսերից զգալիորեն աշխուժացան հայրենիքի և սփյուռքի միջև առկա կապերը: Հայաստան այցելեցին բազմաթիվ սփյուռքահայեր, որոնք ներկայացնում էին այս կամ այն սփյուռքյան «առաջադիմական» կազմակերպությունը կամ արվեստի ու մշակույթի անհատ գործիչներ էին<sup>17</sup>: Այցելած հյուրերին ՄԿՀԸ-ն մանրամասնորեն ներկայացնում էր ՀԽՍՀ-ի նվաճումները, մշակույթի, արվեստի և գիտության առաջընթացը:

Փոխադարձաբար սփյուռքի գաղթօջախներ էին այցելում մշակութային խմբեր Հայկական ԽՍՀ-ից, որոնց հիմնական նպատակը տեղերի «առաջադիմական» կազմակերպությունների հետ կապերի ամրապնդումն էր<sup>18</sup>: ՄԿՀԸ-ն մեծ տեղ էր հատկացվում գաղթօջախներին տարաբնույթ գրականություն և ճանաչողական նյութեր առաքելու գործին<sup>19</sup>: Արդեն 1961 թ. հունիսից մինչև 1962 թ. ընկած ժամանակամիջոցում ՄԿՀԸ-ն սփյուռք է ուղարկել 20 հազարից ավելի գիրք, շուրջ 1800 պարբերական, հազարավոր ձայնասկզկներ, լուսանկարներ, կինոֆիլմեր, ուղեցույցներ և այլն<sup>20</sup>: Պատահական չէ, որ այդ շրջանում գաղթօջախներից ստացվում էին բազմաթիվ խնդրագրեր՝ մշակութային միջոցառումների կազմակերպման գործերում օգնություն տրամադրելու, գրականություն ուղարկելու և այլ հարցերով<sup>21</sup>:

ՄԿՀԸ-ի ջանքերով լուծվել են նաև ՀԽՍՀ բուհերում և ուսումնական այլ հաստատություններում սփյուռքահայերի ուսումնառության, սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ կազմակերպելու, սփյուռքի դպրոցները դասագրքերով ապահովելու, նրանց լաբորատոր և այլ սարքավորումներ հատկացնելու, պատանիների ու երիտասարդների ամառային հանգիստը հայրենիքում կազմակերպելու և այլ կարևոր հարցեր<sup>22</sup>:

Հայրենիք-սփյուռք կապերի կարևորագույն խնդիրներից էր ներգաղթի կազմակերպումը: ՄԿՀԸ-ի ձևավորման շրջանում տեղի էր ունեցել սփյուռքահայերի զանգվածային ներգաղթը 1946-1948 թթ., որն ի վերջո ընդհատվել էր: Դրանից հետո էլ

<sup>16</sup> Նույն տեղում, գ. 9, գ. 165, թ. 23:

<sup>17</sup> Նույն տեղում, գ. 3, գ. 274, թ. 49 և այլն:

<sup>18</sup> Նույն տեղում, ֆ. 326, գ. 2, գ. 44, թ. 1-8 և այլն: Տե՛ս նաև Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք անջնջությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Ե., 1968, էջ 361:

<sup>19</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 709, գ. 1, գ. 89, թ. 5-11:

<sup>20</sup> Տե՛ս Մելիքսեթյան Հ., նշվ. աշխ., էջ 365:

<sup>21</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, գ. 2, գ. 540, թ. 1 և այլն:

<sup>22</sup> Նույն տեղում, գ. 1, գ. 2, թ. 1-2:

տարբեր երկրներում մեծ թիվ էին կազմում հայրենիք վերադառնալ ցանկացողները: 1950-ական թթ. և 1960-ական թթ. սկզբին, զանգվածային ներգաղթի ծրագրի բացակայության պայմաններում, միութենական և հանրապետական իշխանությունների համապատասխան մարմինների թույլտվությամբ բացառապես անհատական կարգով Հայաստան էր ներգաղթել 4000 հզ սփյուռքահայ<sup>23</sup>: Այդ գործընթացը կազմակերպելու նպատակով 1958 թ. ստեղծվեց ՀԽՍՀ մինիստրների խորհրդին առընթեր Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման կառավարական հանձնաժողով, որի գործառույթը ներգաղթել ցանկացողների դիմումների քննարկումն ու մուտքի թույլտվություն տալն էր<sup>24</sup>:

Սփյուռքահայության նոր ներգաղթի որոշումն ընդունվեց 1961 թ. օգոստոսի 12-ին<sup>25</sup>: Ներգաղթի կազմակերպման աշխատանքներում ՄԿՀԸ-ն, ըստ էության, անելիք չունեի, քանի որ օրեր անց որոշվեց ստեղծել նաև հատուկ՝ Հայրենադարձների ընդունման և տեղավորման կոմիտե<sup>26</sup>: ՄԿՀԸ-ի միակ գործը հայրենադարձության և դրա արդյունքների՝ հայրենադարձներին տեղավորելու և նրանց՝ նոր պայմաններին հարմարվելու մասին սփյուռքահայերին տեղեկացնելն էր:

Սփյուռքահայության հետ կապերի կարևորությունը նկատի ունենալով՝ դրանք, ինչպես նաև նախատեսվող ներգաղթի հարցերը քննարկվեցին 1961 թ. սեպտեմբերին տեղի ունեցած Հայաստանի կոմկուսի XXII համագումարում, որտեղ դրվատանքի խոսքեր ասվեցին սփյուռքի «առաջադիմական» կազմակերպությունների աշխատանքի վերաբերյալ: Առանձնացվեց հատկապես նրանց հետևողական պայքարը «դաշնակցության ու իմպերիալիզմի դեմ» և խնդիր դրվեց ընդլայնել և ամրապնդել կապերը սփյուռքահայության և նրանց «առաջադիմական» կազմակերպությունների հետ: Նկատի ունենալով 1962 թ. նախատեսվող սփյուռքահայերի նոր ներգաղթը՝ համագումարը հանրապետության իշխանությունների կարևոր խնդիրը համարեց նրանց համար բնակարանային ու կենցաղային անհրաժեշտ պայմաններ ստեղծելը: ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Յ. Զարոբյանը իր հաշվետու զեկուցման մեջ նշում է, «Հայ առաջադիմական, մշակութային, երիտասարդական, մարզական կազմա-կերպությունները և մամուլի օրգաններն արտասահմանում աշխատավոր հայերի մեջ մեծ աշխատանք են կատարում՝ նրանց Սովետական Հայաստանի նվաճումներին ծանոթացնելու ուղղությամբ, նրանց ճշմարտացիորեն պատմում են մեր իրականության մասին»: Նա անհրաժեշտ էր համարում «ընդլայնել և բարելավել

<sup>23</sup> Տե՛ս Մելիքսեթյան Հ., նշվ. աշխ., էջ 250, Ստեփանյան Ա., XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Ե., 2010, էջ 268:

<sup>24</sup> Տե՛ս Ստեփանյան Ա., նշվ. աշխ., էջ 269:

<sup>25</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 514, թ. 3-6:

<sup>26</sup> Տե՛ս Ստեփանյան Ա., նշվ. աշխ., էջ 278:

...կապերն արտասահմանյան հայերի ու նրանց առաջադիմական կազմակերպությունների հետ»<sup>27</sup>:

Համագումարի որոշումներն իրականացնելու համար 1962 թ. ապրիլին ստեղծվում է ՄԿՀԸ-ի Սփյուռքահայ գաղթօջախների հետ կապի բաժինը: Սկսվեց սփյուռքի հետ նոր կապերի ձևավորման փուլը՝ էթե 1961 թ. ընկերությունը կապեր ուներ միայն 171 սփյուռքահայ կազմակերպությունների ու անհատների, ապա արդեն 1962 թ. վերջին՝ ավելի քան 500-ի<sup>28</sup> հետ: Մշակութային կապերն աճեցին ոչ միայն քանակապես, այլև որակապես: 1964 թ. դրությամբ, երբ ստեղծվեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն, ՄԿՀԸ-ն Սփյուռքում կապ էր պահպանում 631 կազմակերպության ու անհատի հետ<sup>29</sup>:

ՄԿՀԸ-ն սփյուռքի հետ հարաբերությունները սերտացնելու համար իրականացնում էր համահայկական բնույթի միջոցառումներ, որոնց մասնակից էին դարձնում հնարավորինս մեծ թվով սփյուռքահայերի: Այդ առումով հայրենիք-սփյուռք կապերի զարգացմանը էապես նպաստեց այն հանգամանքը, որ 1961 թ. Խորհրդային Հայաստանի 40-ամյակի տոնակատարություններին մեծ թվով սփյուռքահայեր հրավիրվեցին տասնյակ գաղթօջախներից<sup>30</sup>: Նրանց ներկայացուցիչները հանդիպեցին նաև ԽՍՀՄ ղեկավարության և մասնավորապես ԽՄԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ն. Խրուշչովի հետ<sup>31</sup>: Սփյուռքահայերին հատկապես հետաքրքրում էր Թուրքիային բռնակցված հայկական հողերի ճակատագիրը և այդ հարցով դիմեցին Ն. Խրուշչովին, որը նրանց պատասխանեց. «Այսօր Թուրքիային հողային պահանջներ ներկայացնելն անհնարին է: Դա նշանակում է համաշխարհային պատերազմ, որի բոցերի մեջ կարող է այրվել ինքը՝ Հայաստանը: Բսկ ինչ վերաբերում է մեր երկրին, ապա Խորհրդային Միությունում ազգային հարցը լուծված է»: Ամենայն հավանականությամբ, նա այդպիսով պատասխանում էր նաև սփյուռքահայ հյուրերին հուզող՝ Լեռնային Ղարաբաղի ճակատագրին առնչվող հարցին<sup>32</sup>:

1962 թ. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի միջոցառումները լավագույն առիթ էին նոր փոխայցելություններ կազմակերպելու համար: ՄԿՀԸ-ի նախաձեռնությամբ սփյուռքահայ գաղթօջախների ներկայացուցիչները մասնակցեցին այդ միջոցառումներին, իսկ իրենց գաղթօջախներում անցկացրեցին համապատասխան

<sup>27</sup> **Զարոբյան Յ.**, Հայաստանի կոմունիստական պարտիայի հաշվետու գեկուցումը Հայաստանի կոմունիստական պարտիայի XXII համագումարին, 21 սեպտեմբերի, Ե., 1961, էջ 122:

<sup>28</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 709, ց. 3, գ. 150, թ. 13-22:

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 2, թ. 5:

<sup>30</sup> Տե՛ս Միքայիլյանյան Ռ., Մշակութային կյանքը Հայաստանում 1956-1966թթ., Ե., 2008, էջ 147:

<sup>31</sup> Տե՛ս Դավլաթյան Կ., Հուշապատում (դեմքեր, իրողություններ, մտորումներ), Ե., 1998, էջ 62-63:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 63:

արարողություններ: Դրանց հնչեղություն հաղորդելու նպատակով գաղթօջախներ էին մեկնում խորհրդահայ մշակութային ու հասարակական մեծանուն գործիչներ<sup>33</sup>:

ՄԿՀԸ-ի գործունեության արդյունքները ցույց տվեցին, որ չնայած քաղաքական բնույթի սահմանափակումներին, հայրենիք-սփյուռք հարաբերությունների հետագա զարգացման համար առկա են լայն հնարավորություններ: Այդ իրողությունը հաշվի առնելով՝ արդեն 1964 թ. ՀԽՍՀ իշխանությունների կողմից հիմնադրվեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն՝ հայրենիք-սփյուռք կապերը որակապես նոր մակարդակի բարձրացնելու համար<sup>34</sup>:

Փաստորեն, ՄԿՀԸ-ի գործունեության շնորհիվ բավական ամուր հիմք ստեղծվեց հայրենիք-սփյուռք կապերի զարգացման համար: Գործելով հետպատերազմյան դժվարին պայմաններում և զգալիորեն քաղաքականացված իրավիճակում՝ Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի հայկական ընկերությունն էապես նպաստեց այդ կապերի ընդլայնմանը:

#### ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА КУЛЬТУРНЫХ СВЯЗЕЙ С ЗАРУБЕЖНЫМИ СТРАНАМИ В 1944-1964 ГГ.

ЕГИАЗАРЯН А. С.

Резюме

Армянское общество культурных связей с зарубежными странами было основано в 1944 году для регулирования отношений между Советской Арменией и Диаспорой. Главной целью этой структуры было сотрудничество с так называемыми “прогрессивными” организациями, союзами и представителями Диаспоры, а также углубление связей армян Диаспоры с родиной.

#### THE MAIN DIRECTIONS OF ACTIVITY OF ARMENIAN ASSOCIATION OF CULTURAL RELATIONS WITH FOREIGN COUNTRIES IN 1944-1964

A. YEGHIAZARYAN

Abstract

The Armenian Association of Cultural Relations with Foreign Countries was founded in 1944 to manage the relations between the Soviet Armenia and the Diaspora. The main goal of the Association was to cooperate with the so called “progressive” organizations, unions and persons in the Diaspora. After the situation in the Diaspora was deeply researched the Association undertook some necessary programs for the integration in the Diaspora life and to connect Diaspora Armenians to the Homeland.

<sup>33</sup> Տե՛ս Գապրուտիկյան Ս., Քարավանները դեռ քայլում են, Ե., 1964, էջ 32:

<sup>34</sup> Տե՛ս ՀՄԸ, ֆ. 875, ց. 1, գ. 2, թ. 1-2: